Երկրորդ ընթերցում
լրամշակված նախագիծ

Կ-1334[11]-21.04.2026-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի՝

1) 83-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ, 10-րդ և 11-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) այն դեպքերի, երբ վիճարկվում է համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ), վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը, առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման նպատակի խախտմամբ իրականացվող գործունեության վայրի շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնելու վերաբերյալ կայացված վարչական ակտը.

10) այն դեպքերի, երբ վիճարկվում է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում կառուցված ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու մասին համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտը.

11) այն դեպքերում, երբ վիճարկվում է համայնքի ղեկավարի կողմից ներկայացված օրենքով նախատեսված գրավոր պահանջները:».

2) 91-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով.

«6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման կամ քանդման (ապամոնտաժման) հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված միջնորդությունների հիման վրա կիրառված հայցի ապահովման միջոցները, որոնք հանգեցրել են համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից համարվում են վերացած, որի վերաբերյալ դատարանը եռօրյա ժամկետում օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի ~~(այսուհետ՝ Օրենսգիրք)~~՝

1) 83-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ, 10-րդ և 11-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) այն դեպքերի, երբ վիճարկվում է համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ), վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը, առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման նպատակի խախտմամբ իրականացվող գործունեության վայրի շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնելու վերաբերյալ կայացված վարչական ակտը.

10) այն դեպքերի, երբ վիճարկվում է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում կառուցված ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու մասին համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտը.

11) այն դեպքերում, երբ վիճարկվում է համայնքի ղեկավարի կողմից ներկայացված օրենքով նախատեսված գրավոր պահանջները:».

2) 91-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով.

«6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման կամ քանդման (ապամոնտաժման) հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն:»:

Հոդված 2. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված միջնորդությունների հիման վրա կիրառված հայցի ապահովման միջոցները, որոնք հանգեցրել են համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից համարվում են վերացած, որի վերաբերյալ դատարանը եռօրյա ժամկետում օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Կ-1334[24] -21.04.2026-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»	««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով նոր խմբագրությամբ շարադրվող ««Երևան	1. Նախագծի 68-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1. Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և Հաշվեքննիչ պալատը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում»: 2. Նախագծից հանել 68-րդ հոդվածի 4-րդ մասը.	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:

	ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ	քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Նախագիծ) 68-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր			

2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Ղալումյան	Նախագծի 13-րդ հոդված	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածում ս թ մարտի 25-ին ընդունված օրենքով կատարվեց լրացում, և նախատեսվեց ավագանու անդամի հրաժարականի դիմում ներկայացնելուց հետո այն հետ վերցնելու հնարավորության վերաբերյալ դրույթ: Առաջարկում եմ նույնաբովանդակ դրույթ սահմանել Նախագծի 13-րդ հոդվածով: Վերոգրյալը հաշվի առնելով 13-րդ հոդվածը նոր 2-րդ մասով՝ «2. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում՝ գրավոր դիմում ներկայացնելով:»: Կետերի համարակալումը վերանայվել է:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մաս և ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մասում առաջարկումեն ենք «9. Քաղաքապետ կարող է դառնալ 30 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող եւ ավագանու անդամ համարվող այն անձը, որը չունի այլ պետության քաղաքացիություն:» բառերի փոխարեն լրացնել՝ «9. Քաղաքապետ կարող է դառնալ 30 տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և ավագանու անդամ համարվող անձը:» այսինքն քաղաքապետ կարող է դառնալ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:

			հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ավագանու անդամ հանդիսացող անձը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված պահանջների ամրագրումը բխում է մայրաքաղաքի կառավարման առանձնահատուկ կարգավիճակից, ինչպես նաև Երևանի համայնքային կառավարման նկատմամբ առավել պատասխանատվություն ապահովելու անհրաժեշտությունից: Համայնքային պատշաճ և արդյունավետ կառավարումն ապահովելու համար անհրաժեշտ է, որ քաղաքապետը բավարար չափով իրազեկված լինի համայնքի առջև ծառացած խնդիրներին, բնակիչների կարիքներին և համայնքի զարգացման առաջնահերթություններին: Վերջին չորս տարիներին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու պահանջը միտված է ապահովելու քաղաքապետի բավարար ներգրավվածությունը համայնքային կյանքում և նրա տեղեկացվածությունը տեղական ինքնակառավարման ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ: Հիշյալ առաջարկության համատեքստում առաջարկում ենք լրացում կատարել նաև ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում՝ օրենքի անցումային դրույթներով նախատեսելով, որ նույն օրենքի գործողությունը Երևանի քաղաքապետին ներկայացվող պահանջների մասով չի տարածվում գործող Երևանի քաղաքապետի վրա: 11-րդ մասում՝ «օրենսգիրք սահմանադրական օրենքով:» բառերի փոխարեն լրացնել «օրենսգրքով» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:

			Միաժամանակ, նույն առաջարկության համատեքստում առաջարկում ենք փաթեթը լրացնել նոր նախագծով՝ լրացում կատարել նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 142.2-րդ հոդվածի 3-րդ մասում՝ նախատեսելով, որ եթե նույն հոդվածի 2-րդ մասում նշված կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է կամ չի համապատասխանում օրենքով համայնքի ղեկավարին ներկայացվող պահանջներին կամ ավագանու ընտրությունների արդյունքով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով: <u>Ամփոփաթերթի 21-րդ կետ</u>:	Ընդունվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է նոր նախագծով:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերն առաջարկում ենք փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»,	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կիրառվում է հենց «Կառավարություն» տարբերակը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի ողջ տեքստում ցանկացած հոլովաձևով կիրառված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» և «կառավարություն» բառերին: Նշենք, որ Կառավարության բառի փոխարեն երկու իրարից տարբերվող ձևակերպումների միաժամանակյա կիրառությունը հակասում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, որով սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:		

5.	Կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին հղում կատարելիս առաջարկում ենք առաջնորդվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով, այն է. «Սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «սահմանադրական օրենք» բառերը: Սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենսգրքի վերնագիրը»: Առաջարկում ենք «օրենսգիրք սահմանադրական օրենքով:» բառերի փոխարեն լրացնել «օրենսգրքով» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:
6	Կառավարություն	Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է, որ քաղաքապետը տալիս է համայնքի կամ համայնքի վարչական շրջանների անվանումները կամ խորհրդանիշերը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն: Նշենք, որ Նախագծով չի սահմանվում Երևանի վարչական շրջանների խորհրդանիշ ունենալու հնարավորություն, ինչը ենթադրվում է Նախագծի վերոնշյալ դրույթի	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:

			ձևակերպումից, հետևաբար՝ առաջարկում ենք Նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը խմբագրել: «տալիս է համայնքի» բառերից հետո լրացնել «անվանումը կամ խորհրդանիշերը», իսկ «շրջանների անվանումները» բառերց հետո հանել «կամ խորհրդանիշերը» բառերը:		
7	Կառավարություն	Նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվող «անձի (անձանց)» ձևակերպման վերաբերյալ հարկ է նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով նշված է. «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը», հետևաբար առաջարկում ենք քննարկվող դրույթից «(անձանց)» ձևակերպումը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:
8	Կառավարություն	Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է քաղաքապետի կողմից առգրավման ենթակա առարկաների ցանկը, մինչդեռ այդ կետի «գ» ենթակետով սահմանվում է առգրավման իրականացման կարգը, առաջարկում ենք դա շտկել, խմբագրելով որպես նույն հոդվածի 4-րդ մաս:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	Ընդունվել է:
9	Կառավարություն	Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված քաղաքապետի լիազորությունները իրականացվում են աշխատակազմի ստորաբաժանումների և Երևանի հասարակական կարգի պահպանության մունիցիպալ ծառայության միջոցով»: Հատկանշական է, որ Նախագծով չի բացահայտվում, թե ինչ է իրենից ներկայացնում Երևանի հասարակական կարգի պահպանության մունիցիպալ ծառայությունը, ինչ կարգավիճակ ունի, իրավասությունների ինչ շրջանակ,	Ընդունվել է	Ընդունվել է:

			ձևավորման ինչ ընթացակարգ և կազմ ունի և այլն: Կարծում ենք նպատակահարմար է Նախագծով սահմանել այդ ծառայության վերաբերյալ առնվազն նվազագույն կարգավորումներ: <u>Հաշվի առնելով վերոգրյալը հայտնում ենք՝</u> Նախագծի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Քաղաքապետարանի աշխատակազմն ունի կառուցվածքային (դեպարտամենտ, վարչություն, քարտուղարություն, բաժին, ծառայություն) և առանձնացված (վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ) ստորաբաժանումներ: Երևանի հասարակական կարգի պահպանության մունիցիպալ ծառայությանը հանդիսանալու է աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում, ուստի հիշյալ ստորաբաժանման իրավական կարգավիճակը առանձին սահմանելու անհրաժեշտություն առկա չէ: Միաժամանակ, Նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասում, ծառայության կարգավիճակը հստակեցնելու նպատակով հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է և նշվել է, որ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված քաղաքապետի լիազորությունները իրականացվում են աշխատակազմի ստորաբաժանումների, այդ թվում՝ Երևանի հասարակական կարգի պահպանության մունիցիպալ ծառայության միջոցով:		
10	Կառավարություն	Նախագծի 51-րդ հոդված	Նախագծի 51-րդ հոդվածով քաղաքապետի լիազորությունները շրջակա միջավայրի պահպանության բնագավառում խմբագրման են ենթարկվել, ինչի արդյունքում նրա լիազորությունների շրջանակից Նախագծով հանվել է վերջինիս կողմից «Կլիմայի մասին»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ, 28-30-րդ հոդվածների 3-րդ մասերով սահմանված պահանջների կատարումը ապահովելու իրավասությունը, մինչդեռ «Կլիմայի մասին» օրենքի նշված դրույթներում որևէ փոփոխություն չի կատարվում Երևանի քաղաքապետին այս պարտականություններից ազատելու ուղղությամբ: Արդյունքում առկա է անհամապատասխանություն Նախագծի և «Կլիմայի մասին» օրենքի միջև: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ 1-ին մասը լրացվել է նոր 3-րդ կետով՝ «3) իր իրավասության շրջանակներում ապահովում է «Կլիմայի մասին» օրենքով սահմանված պահանջների կատարումը:», և նախատեսվել է, որ քաղաքապետը իր իրավասության շրջանակներում ապահովում է «Կլիմայի մասին» օրենքով սահմանված պահանջների կատարումը:		
11.	Կառավարություն	Նախագծի 61-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ	Նախագծի 61-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետում կիրառվող «ՊՄԳ» հապավումն առաջարկում ենք շարադրել ամբողջական՝ «պետություն-մասնավոր գործընկերության» տարբերակով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

12.	Կառավարություն	Նախագծի 74-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 74-րդ հոդվածի 1-ին մասում նշված է «ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) (այսուհետև՝ Վճարող)» մինչդեռ դրանից հետո առկա է նույն իմաստն արտահայտող «Վճարող» և «վճարող» բառերի միաժամանակյա կիրառություն, ինչը խնդրահարույց է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի և 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի տեսնկյունից, այն է. «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև նույն իմաստն արտահայտող և համապատասխանաբար Նախագծի 74-րդ հոդվածի 1-ին մասով և 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «Պարտավորություն» և «Միասնական հաշիվ» կրճատ տարբերակներին:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագծի 82-րդ հոդվածի 10-րդ մաս	Նախագծի 82-րդ հոդվածի 10-րդ մասում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքին հղում կատարելիս առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է. «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը»:		
14.	Կառավարություն	2-րդ հոդված	1. Հանել վերնագիրը՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերը: 2. 2-րդ մասում կատարել լրացում՝ լրացնել նոր նախադասություն՝ «Սույն օրենքի գործողությունը Երևանի քաղաքապետին ներկայացվող պահանջների մասով չի տարածվում գործող Երևանի քաղաքապետի վրա:» Հաշվի առնելով Նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մասում կատարվող լրացումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	4-րդ հոդված	Հոդված 4-ի վերնագիրը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	Նախագծի ամբողջ տեքս	Նախագծի տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառը առաջարկում ենք փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ», ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կիրառվում է հենց «Կառավարություն» տարբերակը, իսկ «Կառավարություն» բառը իր հոլովաձևերով գրել մեծատառ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	6-րդ հոդված	Հանել հոդվածի վերնագիրը:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,					

1.	Կառավարություն	1-ին հոդված	Առաջարկում ենք «(այսուհետ՝ Օրենք) բառերը» հանել, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» կրճատ տարբերակն այդ նախագծում այլևս չի կիրառվում: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ	5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1. Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և Հաշվեքննիչ պալատը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:»:	Ընդունվել է. Կատարված փոփոխություններին համապատասխան հանվել է նաև 5-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	3-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության կառավարության» բառը առաջարկում ենք փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ», ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է	Ընդունվել է:

			Սահմանադրությամբ կիրառվում է հենց «Կառավարություն» տարբերակը		
«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	1-ին հոդված	1-ին հոդվածով «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացվող 7.7-րդ հոդվածի 4-րդ մասում «Կենտրոնական գանձապետարան» բառերն առաջարկում ենք շարադրել փոքրատառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ օրենքում այդ բառերը կիրառվում են փոքրատառերով: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					

1.	Կառավարություն	1-ին հոդված	Հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» կրճատ տարբերակն այդ նախագծում այլևս չի կիրառվում: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է	Ընդունվել է:
2.	Կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկում ենք հոդվածի վերնագիրը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	1-ին հոդված	Հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» կրճատ տարբերակն այդ նախագծում այլևս չի կիրառվում: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է	Ընդունվել է:
2.	Կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկում ենք հոդվածի վերնագիրը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է:

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	1-ին հոդված	1. Հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենք» կրճատ տարբերակն այդ նախագծում այլևս չի կիրառվում: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծերի փաթեթի մի շարք այլ նախագծերին, որտեղ առկա է այս խնդիրը ևս: 2. ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի համարակալումն առաջարկում ենք շտկել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ հոդվածը բաժանվում է «ա», «բ» և «գ» ենթակետերի, այնուհետև՝ 3-րդ և 4-րդ կետերի: Անհրաժեշտ է բացառել վերոնշյալ նախագծի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված համարակալման վերաբերյալ դրույթների միջև հակասությունները: Հաշվի առնելով վերոգրյալը հոդվածների համարակալումները շտկվել են:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					

1.	Կառավարություն	7-րդ հոդված	«տարածվում է» բառից հետո լրացնել «նաև» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկում ենք հոդվածի վերնագիրը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	1-ին հոդված	1-ին հոդվածի՝ «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը հանել	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	Նախագիծ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ, 9-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներում նախատեսված պահանջները կարող են ներկայացվել համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձի կողմից՝ առաջարկում ենք համապատասխան լրացումներ կատարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և	Ընդունվել է	Ընդունվել է:

			փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ, 9-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներում՝ նշելով ոչ միայն համայնքի ղեկավարի, այլ նաև նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձի կողմից պահանջներ ներկայացնելու մասին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի համապատասխան մասերում լրացվել են «կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձի» բառերը:		
2.	Կառավարություն	25-րդ հոդվածի 2-րդ կետ	Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք հստակեցնել, թե դրանում առաջարկվող փոփոխությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 310-րդ հոդվածում կոնկրետ որտեղ է կատարվում: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 25-րդ հոդվածի 2-րդ կետում «տեղական ինքնակառավարման» բառերից առաջ լրացնել «վերջին պարբերությունում» բառերը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին:	Ընդունվել է	Ընդունվել է:
13.	Կառավարություն	««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, որի համաձայն. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծերի փաթեթում առկա բոլոր այն եզրափակիչ մաս կամ անցումային դրույթներ սահմանող հոդվածներին, որոնք ունեն վերնագրեր:	:	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	2-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 46-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասից հանել տեղական վճարների վերաբերյալ կարգավորումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	6-րդ հոդված.	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի 240-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասից հանել «համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	Կառավարություն	8-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածում լրացվող նոր 6.1-ին մասում նշվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման դեպքերի մասին, այնինչ լրացվող մասը վերաբերվում է փոխադրամիջոցներին, ուստի, կարգավորումն անհրաժեշտ է վերանայել: Հաշվի առնելով վերոգրյալը կարգավորումը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «6.1. Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված կարգավորումների պահանջները չեն տարածվում պետական մարմինների (այդ թվում՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, քրեական վարույթի հանրային մասնակիցների), տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի հիման վրա իրականացվող փոխադրամիջոցի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ժառանգությունն ընդունելու հիմքով փոխադրամիջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման դեպքերի վրա:»:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

1.	Կառավարություն	1-ին հոդված	Հստակեցնելու նպատակով առաջարկում ենք «հոդվածում» բառի փոխարեն հետո լրացնել «հոդվածի 9-րդ մասում» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԼՐԱՑՎԵԼ Է ՆՈՐ ՆԱԽԱԳԾՈՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	Լրացվող նոր նախագիծ	Առաջարկում ենք «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթում ներառել նաև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: «ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 3-րդ մասում «հրաժարվում է» բառերից հետո լրացնել «կամ չի համապատասխանում օրենքով համայնքի ղեկավարին ներկայացվող պահանջներին» բառերը.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:»:		